

Բարի օր հարգելի հավատակից գործընկերներ, բարեկամներ. չնայած այս պայմաններում Արցախում ապրող հայի օրը բարի չի՝ լինում: Բայց և այնպես, բարի ու ջերմ ողջույններ ուժեղ, տոկուն, անկոտրում, համբերատար...պաշարված ու շրջափակված Արցախից:

Այս ծայրահեղ իրավիճակում, երբ Արցախի լինելիության խնդիրն է ծառայած յուրաքանչյուր հայի կյանքում, բավականին ծանր ապրումներով արձանագրեցի, թե ինչպես է մեր թիմը, անտեսելով առկա դժվարությունները, շարունակում անվերապահորեն և մեծ պատասխանատվությամբ իրականացնել Ընկերակցության ծրագրերը: Հիշեցնեմ, որ պայմաններն այսօր Արցախում անբավարար են բոլոր առումներով. կաթվածահար են եղել բազմաթիվ պետական և ո՛չ պետական, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների գործունեությունը, լրիվությամբ կասեցվել է հասարակական տրանսպորտը, իսպառ բացակայում է վառելիքը և գազը. Սրան զուգահեռ լույսի պարբերական անջատումները, սննդամթերքի անբավարարության գերխնդիրը, որին արդեն գումարվել է նաև հացի խնդիրը... Երեկվանից կասեցվել է շտապ օգնության գործունեությունը, առկա է դեղորայքի խիստ պակաս. մի խոսքով, խոչընդոտները, որոնց ավելի շատ հարմարվել ենք, քան դրանց դեմ պայքարում ենք, ցավոտ են:

Բոլոր առկա դժվարություններով հանդերձ Ընկերակցությունը անտրտունջ շարունակում է գործել: Վերջին 3 ամիսների ընթացքում կազմակերպել և իրագործել է բակային ճամբարներ մանուկների և պատանիների համար և գիշերակացով ճամբար գյուղական համայնքների երիտասարդների համար: Ճամբարները գործել են Ստեփանակերտում և Ասկերանում՝ բացառապես ներքին ռեսուրսներով, տեղական արտադրության գյուղմթերքով: Անշուշտ, որոշ ապրանքատեսակների պակասը զգալի էր, ինչևէ, ծրագիրը նպատակային էր և արդյունավետ:

Օգոստոսի կեսից վերաբացվեցին մանկապարտեզները: Աշխատում ենք, արդեն մի քանի օր է մանկապարտեզին հաց չի մատակարարվում այսօրի բացակայության պատճառով: Սակայն որոշ քանակությամբ վաղօրոք հավաքած սննդամթերքը, թույլ են տալիս շարունակել գործունեությունը:

Անընդմեջ հանդիպումներ ենք ունենում պետական և ոչ պետական, մեր որդեգրած և գործող ծրագրերից բացի, այլ աջակցություն ցուցաբերելու համար: Այսօր ԱԶԱԸ այն եզակիներից է, ով այս պայմաններում ոչ միայն չի դադարեցրել իր գործունեությունը, այլ բացի մեր ծրագրերից, պետական և մասնավոր կառույցներին օգնում ենք տարբեր ձևերով ըստ կարիքի:

Սոցաշխատողները մշտապես կապի մեջ են մեր բոլոր շահառուների հետ և կարիքի առկայության դեպքում հնարավորինս աջակցում են թե՛ նյութապես, թե՛ բարոյապես: «Ծող» ցերեկային կենտրոնները նույնպես շարունակում են իրենց գործունեությունը՝ չնայած այստեղ ևս խնդիրներն շատ են:

Այսքանը արվածի մասին...արվածը ներկայացնելը հեշտ ստացվեց, բայց համոզված եմ, որ դժվար է պատկերացնել, թե ինչ թանկ գնով են կյանքի կոչվել այս ծրագրերը: Մարդկային բոլոր ռեսուրսները համակարգվում են մեկ խնդրի լուծման շուրջ, իսկ խնդիրները շատ-շատ են՝ սննդամթերքը տեղ է հասցվում ոտքով, ճաշը եփվում է բացօթյա կրակի վրա, որոշ ծրագրեր համապատասխանեցվում են լույսի գրաֆիկի հետ և այլն, և այլն...

Բարեկամներ՝, թող բոլորիդ մտքերում ու հիշողություններում Արցախը մնա այնպիսին, ինչպիսին տեսել էիք՝ ծաղկուն, անկախ, առատ, անհոգ, հյուրասեր, դեպի իրեն կանչող...ինչքա՛ն էին բոլորն այն ժամանակ ձգտում դեպի նա, որքա՛ն քաղցր հիշողություններ ունի հայը Արցախի հետ կապված, ինչքա՛ն ցանկալի էր ու դյուրին Արցախը սիրելն ու նրա մասին խոսելը, պատմելը, ներկայացնելը: Այո՛, ամեն ինչ լավ ու

բարի է, երբ հեշտ է, գեղեցիկ է... ճշտի դեմ չես հակառակվի... Ցավն այն է, որ այսօր հայը սխալի դեմ էլ չի հակառակվում...

Այսօր Ադրբեյջանը վարում է այնպիսի քաղաքականություն, որ մեր առջև դնում է ոչ միայն պետական պատնեշներ, այլև նաև ձեռնարկում ու դիմում այնպիսի քայլերի, որ վերացնի ու ճնշի որևէ բաղադրիչ, ինչը կապ ունի Արցախի անվտանգության ու ինքնորոշման հետ, Արցախի սուբյեկտայնության հետ: Սիրելի հայրենակիցներ, եղեք մեր ձայնը, տարբեր երկրների մեջ եղեք մեր կոչը և պահանջը: Բավականին բարդ է այդ գործընթացը՝ գիտեմ, բայց և դյուրին չէ մեր վիճակը՝ կեցության իմաստով: Մենք մեր վրայինը արեցինք ու շարունակում ենք անել՝ կարելին ու անկարելին: Կոչ եմ անում, որ չիրաժարվենք մեր ազգային գաղափարից, մեր գաղափարախոսությունից, Արցախից՝ բոլորով միանալով ու կամենալով գործնապես, ու կլինի, կլինի մերը: Ցանկանում եմ մի անգամ ևս նշել, մենք կարող ենք ստեղծել քաղաքական պայմաններ, իրավական թեզեր և օրենսդրական մեթոդներ, ու արտաքին քաղաքականության մեջ գերակա պահենք Արցախի միջազգայնության գործընթացը: Ինչպես տեսաք՝ վերջի երկու ամիսներին միջազգային լրատվականները և քաղաքական քննարկումները որոշակիորեն հնարավոր եղավ թեթել Արցախի կողմ, բայց ինչ գնով ու դեռ կդիմանալ, ուղակի մեր ուժերը մեկտեղենք՝ Արցախի հանրապետության, Արցախի Իրավական սուբյեկտայնությունը բարձրացնելու նոր մակարդակի: Գուցե դժվար է, կամ շատերի համար անհնար է թվում դա ու տեսանելի չէ, բայց չիրաժարվենք այդ նպատակից, դա մեր անկախության ռազմավարական նպատակը դարձնենք և դրանով էլ հենց հասնենք մեր ընդհանուր նպատակին: Հարգելիներ, բոլորս տեսնում ենք ինչ խաթարված վիճակ կա Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության մեջ: Այդ եռամիասնության շնորհիվ 90-ականներին մենք կարողացանք հասնել հաջողությունների, այս միասնության արդյունքը մեզ բերեց հաղթանակի, փառք Աստծո: Ուրեմն կարիք ունենք հստակ քայլերի՝ եռամիասնությունը վերականգնելու համար: Արցախը այն ժամանակ հիմնական դերակատարներից էր համախմբման, այսօր էլ նույն պատրաստակամությամբ և ստանձնած առաքելությամբ՝ Արցախը կանչում է իր եղբայրներին ու քույրերին, հայորդիներին՝ հավաքվելու, վերականգնելու և վերականգնվելու:

Հիմա, երբ Արցախը խաչվում է, հայը հանդիսատես է դարձել, ավելին՝ դերախաղին հետևողներից «ԽԱՉԵԼ» գոռացողները քիչ չեն... Պաղել է սերը, բացակայում է ապրումակցումը, միասնականությունը պառակտվել է անդարձ: Արցախը, ավելի, քան աշխարհի վրա գտնվող որևէ երկիր, զգում է վերջին ժամանակները:

Արցախը ծայրահեղ վիճակում է, բայց ՄԱԿ-ի, ՀԱՊԿ, ԵԱՏՄ երկրների և այլ միջազգային կազմակերպությունների աջակցությունից անդին, Արցախում շրջափակված հայը հայի կարիքն ունի: Այն, ինչ կատարվում է հիմա մեր հայրենիքի հետ ճիշտ գնահատանքի չի՝ արժանանում ոչ միայն միջազգային հանրության, այլև մեր հայրենակիցների կողմից: Այնպիսի տպավորություն է, որ ամեն ինչ արվում է հայությանը Արցախի խնդրից շեղելու համար: Եթե սկզբնական օրերին մտահոգության արձագանքներ կային, ապա այժմ ցավոտ ու քար լռություն է: Բոլորը շարունակում են ապրել, Արցախը շարունակում է չապրել... այո՛, չապրել, Ստեփանակերտն այսօր ուրվական քաղաք է հիշեցնում սարսափ ֆիլմերից. ցերեկը՝ հոգևած, թմրած, մտահոգ հատուկենտ մարդիկ... գիշերը՝ մանկահասակ երեխաներ, պատանիներ, կանայք, ծերեր փոռից փուռ են քարշ գալիս օրվա հացը գտնելու հույսով... Նման պայմաններում ապրելու որոշումը ամենածանրն է. ամենասարսափելին, բայց մենք որոշել ենք Արցախում ապրել և Արցախը հայկական պահելու համար պայքարել... Մենք այդ որոշումը կայացրել ենք մեր անչափահաս երեխաների, դեռ չճնված բալիկների, մեր հիվանդների, ծերերի, մեր զինվորների, մեր տղաների փոխարեն... մենք նրանց դատապարտել ենք՝ առանց ընտրելու իրավունքի սիրել, ու անմնացորդ սիրել այս թանկ հողաբեկորը: Երանի ոչ ոք

այդ դժվար ու ծանր ընտրության առջև չկանգնի: Մենք ընտրել ենք հայի արժանապատվությունը պահելը...

Ու եթե աշխարհի որևէ ծայրում որևէ մեկը մտածում է, թե ամեն ինչ ավարտված է, չարաչար սխալվում է բարեկամներ...իսկ ես հավատում եմ, որ եթե աշխարհի բոլոր հայերը կամենան, որ Արցախը մերը լինի, այն կլինի...կլինի մերը...

Ձեր աղոթքներում հիշեք, որ կա՛ Արցախը: Նա մեր բոլորիս կարիքն ունի...